

**Ապրանքների մաքսային արժեքը որոշելիս գումարման մեթոդի (մեթոդ 5)
կիրառման մասին**

14.12.2012

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի
դեկտեմբերի 12-ի թիվ 273 որոշում**

«Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող Ապրանքների մաքսային արժեքը որոշելիս գումարման մեթոդի (մեթոդ 5) կիրառման կանոնները:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Նախագահ՝

Վ. Բ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի 2012 թվականի

դեկտեմբերի 12-ի թիվ 273 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

Ապրանքների մաքսային արժեքը որոշելիս գումարման մեթոդի (մեթոդ 5) կիրառման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոններն օգտագործվում են «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 9-րդ հոդվածով սահմանված գումարման մեթոդը (մեթոդ 5) կիրառելիս:

2. Սույն Կանոնները մշակվել են Համաձայնագրի, «Սակագների եւ առետրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» 1994 թվականի համաձայնագրի դրույթների՝ ներառյալ դրան կից բացատրական նշումները, ինչպես նաեւ Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային գնահատման տեխնիկական կոմիտեի նյութերի հիման վրա՝ 5-րդ մեթոդի միանման կիրառությունն ապահովելու նպատակով:

3. 5-րդ մեթոդը կիրառվում է, եթե Մաքսային միության միասնական մաքսային տարածք (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային տարածք) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել Համաձայնագրի 4-րդ, 6-8-րդ հոդվածներին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) դիմումի հիման վրա

Համաձայնագրի 8-րդ եւ 9-րդ հոդվածների կիրառման կարգը կարող է հակառակը լինել:

Գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը 5-րդ մեթոդով որոշելիս որպես հիմք ընդունվում է այդ ապրանքների հաշվարկային արժեքը, որը որոշվում է Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված բաղադրիչների գումարման միջոցով:

Ապրանքների՝ 5-րդ մեթոդով որոշվող մաքսային արժեքի մասին տեղեկությունները հայտարարվում են մաքսային արժեքի մասին հայտարարագրում՝ «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման, հսկողության եւ ճշգրտման կարգի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ հաստատված Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգին համապատասխան:

4. Ապրանքների մաքսային արժեքը, որպես կանոն, որոշվում է Մաքսային միության մաքսային տարածքում հասանելի փաստաթղթերի եւ տեղեկությունների հիման վրա: Սակայն հաշվարկային արժեքը որոշելու համար անհրաժեշտ է տիրապետել գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության ծախսերի (արտադրության ծախքերի) մասին փաստաթղթերի եւ տեղեկությունների, նշված ապրանքների այն արտադրողի այլ փաստաթղթերի եւ տեղեկությունների, որը գտնվում է Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս:

5. Կապված այն բանի հետ, որ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրողը գտնվում է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների իրավասությունից դուրս, եւ սույն Կանոնների 4-րդ կետում նշված փաստաթղթերը եւ տեղեկությունները հաճախ գաղտնի են եւ չեն հրապարակվում արտադրողի կողմից, 5-րդ մեթոդի կիրառումը հիմնականում սահմանափակվում է այն դեպքերով, երբ ապրանքների գնորդը եւ վաճառողը փոխկապակցված անձինք են, ընդ որում, արտադրողը համաձայն է արտադրության ծախքերի

մասին փաստաթղթեր եւ տեղեկություններ տրամադրել եւ անհրաժեշտության դեպքում ապահովել դրանք ստուգելու հնարավորությունը՝ Համաձայնագրի 9-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

«Փոխկապակցված անձ» հասկացությունն օգտագործվում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իմաստով:

6. Արտադրողի կողմից կամ նրա անունից տրամադրվող փաստաթղթերը եւ տեղեկությունները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին, որոնք սահմանված կարգով կիրառվում են գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության երկրում այն ժամանակահատվածում, երբ նշված ապրանքներն արտադրվել են: Հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքները սահմանվում են օրենսդրությամբ (արտադրության երկրի լիազորված մարմինների նորմատիվ իրավական ակտերով), ինչպես նաեւ մասնագիտական ասոցիացիաների կամ արտադրության երկրի օրենսդրությանը համապատասխան նման հանձնարարականներ արձակելու լիազորություն ունեցող այլ կազմակերպությունների հանձնարարականների տեսքով:

Արտադրողի կողմից կամ նրա անունից ներկայացված փաստաթղթերի եւ տեղեկությունների՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության երկրի հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքների հետ համապատասխանության հավաստման նպատակով հայտարարատուն (մաքսային ներկայացուցիչը) իրավունք ունի ներկայացնելու, օրինակ, արտադրության ծախքերի մակարդակի, ինչպես նաեւ ներկայացված փաստաթղթերում եւ տեղեկություններում նշված շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առեւտրային եւ կառավարման ծախսերի) մակարդակի՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ միեւնույն դասին կամ տեսակին պատկանող, Մաքսային միության մաքսային տարածք արտահանման համար ապրանքների վաճառքների ժամանակ բնորոշ արտադրության ծախքերի ու շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առեւտրային եւ կառավարման ծախսերի) մակարդակի հետ

համապատասխանության մասին եզրակացություն, որը տրվում է նշված ապրանքների արտադրության երկրի՝ հաշվապահական հաշվառման ոլորտում լիազորված մարմնի կողմից կամ անկախ կազմակերպության կողմից, որը կարող է հանդես գալ որպես փորձագիտական կազմակերպություն՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության երկրի օրենսդրության համաձայն (օրինակ՝ հաշվապահական ասոցիացիաները, առևտրաարդյունաբերական պալատները, գիտահետազոտական ճյուղային ինստիտուտները եւ այլն):

II. Ապրանքների հաշվարկային արժեքը

7. Ապրանքների հաշվարկային արժեքը, Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, իր մեջ ներառում է՝

ա) նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերը եւ արտադրության, ինչպես նաեւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության հետ կապված այլ գործառնությունների ծախսեր.

բ) շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առևտրային եւ կառավարման ծախսերի) գումարը, որը համարժեք է այն մեծությանը, որը սովորաբար հաշվի է առնվում գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ միեւնույն դասի կամ տեսակի այն ապրանքների վաճառքների ժամանակ, որոնք արտադրվում են արտահանման երկրում Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու համար.

գ) Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 4-6-րդ ենթակետերում նշված ծախսերը (այսուհետ՝ ապրանքների առաքման ծախսեր):

8. Նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերի եւ արտադրության ծախսերի, ինչպես նաեւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության հետ կապված այլ գործառնությունների ծախսերի չափը որոշելիս հաշվի է առնվում հետեւյալը:

Երկրների մեծ մասի հաշվապահական հաշվառման համակարգերը, որպես կանոն, սահմանում են նյութերի շարքին դասվող գույքի տեսակների ցանկը:

Սովորաբար նյութերի շարքին են դասվում հումքը, հիմնական եւ օժանդակ նյութերը, գնովի կիսաֆաբրիկատները եւ կոմպլեկտավորող տարրերը, վառելանյութը, տարան, պահեստամասերը, շինարարական եւ այլ նյութեր:

Նյութերի պատրաստման հետ կապված ծախսերը հավասար են դրանց փաստացի ինքնարժեքին, որի չափի մասին փաստաթղթերը եւ տեղեկությունները տրամադրվում են արտադրողի կողմից կամ նրա անունից:

Նյութերի ձեռքբերման ծախսեր են այն ծախսերը, որոնք կրել է արտադրողը՝ դրանք իր հետ չփոխկապակցված անձից ձեռք բերելիս:

Արտադրության ծախսերը, ինչպես նաեւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության հետ կապված գործառնությունների ծախսերը ներառում են ուղղակի եւ անուղղակի ծախսեր: Ծախսերի դասումը ուղղակի կամ անուղղակի ծախսերին իրականացվում է արտադրողի կողմից՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության երկրում կիրառվող հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին համապատասխան ձեւավորված հաշվառման քաղաքականության համաձայն:

9. Համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերի եւ արտադրության ծախսերի, ինչպես նաեւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության հետ կապված այլ գործառնությունների ծախսերի մեջ ներառվում են՝

ա) տարայի հետ կապված ծախսերը, եթե մաքսային նպատակներով այն գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ դիտվում է որպես մեկ ամբողջություն.

բ) փաթեթավորման ծախսերը՝ ներառյալ փաթեթավորման նյութերի եւ փաթեթավորման աշխատանքների արժեքները.

գ) 5-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների եւ ծառայությունների՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան բաշխված արժեքը: Այն համաձայնագրերը, որոնք գնորդի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներկայացվել են անվճար կամ իջեցված գնով՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտահանման նպատակով արտադրության եւ վաճառքի հետ կապված, մասնավորապես՝

հումքի, նյութերի, դետալների, կիսաֆաբրիկատների եւ նման առարկաների, որոնցից բաղկացած են գնահատվող (ներմուծվող) ապրանքները.

գործիքների, դրոշմների, կաղապարների եւ նման այլ առարկաների, որոնք օգտագործվել են գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության ժամանակ.

նյութերի, որոնք սպառվել են գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության ժամանակ.

նախագծման, մշակման, ինժեներային, կոնստրուկտորային աշխատանքների, գեղարվեստական ձեւավորման, դիզայնի, էքսիզների եւ գծագրերի, որոնք իրականացվել են Մաքսային միության մաքսային տարածքից դուրս եւ անհրաժեշտ են գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության համար:

Գնորդի կողմից գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրողին սույն ենթակետում նշված գնահատվող (ներմուծվող) ցանկացած ապրանքների եւ ծառայությունների անվճար մատուցումը այն դեպքերում, երբ արտադրողը գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ կապված իր ծախսումների հաշվարկման մեջ չի ներառել դրանց արժեքը, այդպիսի ապրանքների եւ ծառայությունների արժեքը պետք է ընդգրկվի գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքի մեջ:

Այն դեպքում, երբ այնպիսի ապրանքները եւ ծառայությունները, ինչպիսիք են նախագծումը, մշակումը, ինժեներային, կոնստրուկտորական աշխատանքը,

գեղարվեստական ձեւավորումը, դիզայնը, էսքիզները եւ գծագրերը, կատարվել են Մաքսային միության մաքսային տարածքում եւ տրամադրվել են արտադրողին գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության համար, դրանց արժեքն ընդգրկվում է հաշվարկային արժեքի մեջ միայն այն չափով, որքան արտադրողի կողմից վճարվել է նման ապրանքների եւ ծառայությունների համար:

10. Սույն կանոնների 9-րդ կետում նշված ծախսերը չպետք է կրկնակի հաշվի առնվեն գնահատվող (ներմուծվող) ապրանքների հաշվարկային արժեքը որոշելիս:

11. Շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առետրային եւ կառավարման ծախսերի) գումարը, Համաձայնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, հաշվի է առնվում ամբողջությամբ եւ որոշվում է արտադրողի կողմից կամ նրա անունից ներկայացված տեղեկությունների հիման վրա:

Որպես ընդհանուր ծախսեր (առետրային եւ կառավարման ծախսեր) պետք է հաշվի առնվեն Մաքսային միության մաքսային տարածք արտահանման համար արտադրված ապրանքների արտադրության եւ վաճառքի ուղղակի եւ անուղղակի ծախսերը, որոնք նշված չեն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում:

Համապատասխան ծախսերի դասումը ուղղակի կամ անուղղակի ծախսերին իրականացվում է արտադրողի կողմից իր՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության երկրում կիրառվող հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին համապատասխան ձեւավորված հաշվառման քաղաքականության համաձայն:

Համաձայնագրի 9-րդ հոդվածի կիրառման դեպքում պետք է հաշվի առնել շահույթի եւ ընդհանուր այն ծախսերի (առետրային եւ կառավարման ծախսերի) գումարը, որոնք հաճախ կատարվում են Մաքսային միության մաքսային տարածք արտահանման համար՝ արտահանման երկրում արտադրված գնահատվող

(ներմուծվող) ապրանքների միեւնույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքների ժամանակ:

Այն դեպքում, երբ արտադրողի շահույթի ցուցանիշները ցածր են, իսկ ընդհանուր ծախսերը (առետրային եւ կառավարման ծախսերը)՝ բարձր, շահույթը եւ ընդհանուր ծախսերը (առետրային եւ կառավարման ծախսերը), որոնք դիտարկվում են որպես մեկ ամբողջություն, կարող են, այնուամենայնիվ, համաձայնեցվել շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առետրային եւ կառավարման ծախսերի) հետ, որոնք կատարվում են Մաքսային միության մաքսային տարածք արտահանման համար արտադրված ապրանքների միեւնույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքների ժամանակ:

Նման իրավիճակ կարող է տեղի ունենալ, օրինակ, երբ արտադրողը, սկսելով նոր ապրանքների մատակարարումներ Մաքսային միության ներքին շուկա, դրա հետ կապված ընդհանուր ծախսերի (առետրային եւ կառավարման ծախսերի) փոխհատուցման նպատակով շուկայի յուրացման համար անհրաժեշտ ժամանակահատվածում կարող է ստանալ ցածր շահույթ կամ ընդհանրապես այն չստանալ:

Երբ արտադրողը կարող է հաստատել, որ ցածր շահույթը առետրային հատուկ հանգամանքների հետեւանք է, արտադրողի փաստացի շահույթի մասին տվյալները հաշվի են առնվում՝ պայմանով, որ արտադրողը պատշաճ կերպով հիմնավորում է դրա չափը, իսկ արտադրողի գնային քաղաքականությունն արտացոլում է արդյունաբերության համապատասխան ճյուղում սովորական գնային քաղաքականությունը: Նման իրավիճակ կարող է տեղի ունենալ, օրինակ, եթե արտադրողն ստիպված է ժամանակավորապես նվազեցնել գները պահանջարկի չնախատեսված նվազման հետեւանքով, կամ եթե արտադրողն ապրանքներ է վաճառում, որ լրացնի Մաքսային միության մաքսային տարածքում արտադրվող ապրանքների տեսականին, եւ համաձայն է ստանալ ցածր շահույթ՝ մրցունակության պահպանման համար:

Այն դեպքում, երբ շահույթի կամ ընդհանուր ծախսերի (առեւտրային եւ կառավարման ծախսերի) գումարի մասին արտադրողի կողմից կամ նրա անունից ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում միեւնոյն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքի ժամանակ սովորական շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առեւտրային եւ կառավարման ծախսերի) մասին տեղեկություններին, շահույթի կամ ընդհանուր ծախսերի (առեւտրային եւ կառավարման ծախսերի) գումարը կարող է որոշվել՝ մաքսային մարմնի տնօրինության տակ գտնվող հավաստի, քանակապես որոշելի եւ փաստաթղթային հաստատում ունեցող տեղեկատվության վրա հիմնված այլ տեղեկությունների հիման վրա:

12. Ապրանքների առաքման ծախսերին են դասվում հետեւյալ ծախսերը, որոնք որոշվում են դրանց փաստացի մեծության վերաբերյալ փաստաթղթային հաստատում ունեցող տեղեկությունների հիման վրա.

ա) ապրանքների՝ մինչեւ օդանավակայան, նավահանգիստ կամ Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների ժամանման մեկ այլ վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ կապված ծախսերը.

բ) ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման հետ կապված եւ դրանց՝ մինչեւ օդանավակայան, նավահանգիստ կամ Մաքսային միության մաքսային տարածքում ժամանման մեկ այլ վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ կապված այլ գործառնությունների կատարման ծախսերը.

գ) սույն կետի «ա» եւ «բ» ենթակետերում նշված գործառնությունների հետ կապված ապահովագրման ծախսերը:

13. Ապրանքների մաքսային արժեքի հսկողությունն իրականացվում է մաքսային մարմինների կողմից՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ հաստատված «Ապրանքների մաքսային արժեքի հսկողության կարգին» համապատասխան:

Այն դեպքում, երբ հաշվարկային արժեքի որոշման նպատակով օգտագործվում են այլ տվյալներ, քան նրանք, որոնք ներկայացվել են արտադրողի կողմից կամ նրա անունից, մաքսային մարմինը նշում է այդպիսի տվյալների աղբյուրը, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված հաշվարկները հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) կողմից հայտարարված ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման մեջ, որն ընդունվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ սահմանված կարգով եւ ձեւով:

III. 5-րդ մեթոդի միջոցով ապրանքների մաքսային արժեքի որոշման օրինակներ

Օրինակ 1. Օտարերկրյա կազմակերպությունը (այսուհետ՝ արտադրող) իր՝ անդամ պետություններից մեկում գրանցված դուստր կազմակերպությանը (այսուհետ՝ ներմուծող-գնորդ) մատակարարում է տուրքինային սարքավորում: Քանի որ տուրքինային սարքավորման մաքսային արժեքը չի կարող որոշվել Համաձայնագրի 4-րդ եւ 6-8-րդ հոդվածներին համապատասխան, այն որոշվում է 5-րդ մեթոդի միջոցով:

Ներմուծվող տուրքինային սարքավորումը պատրաստված է ներմուծող գնորդի հատուկ պատվերով:

Տուրքինային սարքավորման արտադրության համար ներմուծող գնորդը արտադրողին անվճար տրամադրել է բացառապես այդ սարքավորման համար նախատեսված, 500 դրամական միավոր արժողությամբ էսքիզներ եւ գծագրեր, որոնք կատարվել են Մաքսային միության մաքսային տարածքում:

Մաքսային մարմնին ներկայացվել են արտադրողի կողմից ստացված փաստաթղթերը եւ տեղեկությունները, որոնց հիման վրա սահմանվել են հետեւյալ ցուցանիշները.

նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսեր՝ 4 000 դրամական միավոր,

արտադրության ծախսեր՝ 3 500 դրամական միավոր,

ընդհանուր ծախսեր (առելարային եւ կառավարման ծախսեր)՝ 350 դրամական միավոր,

շահույթ՝ 1 570 դրամական միավոր:

Ապրանքների առաքման ծախսերը կազմում են 80 դրամական միավոր:

Մաքսային մարմնի տնօրինության տակ են գտնվում նաեւ արտադրության երկրի առելարաարդյունաբերական պալատի կողմից փաստաթղթային հաստատում ունեցող տեղեկություններ առ այն, որ Մաքսային միության մաքսային տարածք արտահանման համար ապրանքների միեւնույն դասին եւ տեսակին պատկանող ապրանքների վաճառքների ժամանակ շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առելարային եւ կառավարման ծախսերի) գումարը սովորաբար կազմում է նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերի եւ տուրքինային սարքավորումների արտադրության ծախսերի գումարի մոտ 25 տոկոսը: Ուսումնասիրվող իրավիճակի դեպքում այդ մեծությունը կազմում է 1 875 դրամական միավոր $((4\ 000 + 3\ 500) \times 25\%)$:

Ուսումնասիրվող իրավիճակի դեպքում շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առելարային եւ կառավարման ծախսերի) գումարը կազմում է 1920 դրամական միավոր $(1\ 570 + 350)$ կամ 25,6 տոկոս, ինչը համադրելի է դրա սովորական մեծության հետ: Այսպիսով, տուրքինային սարքավորման մաքսային արժեքի որոշման նպատակով նշված ցուցանիշի արժեքը ընդունելի է:

Քանի որ տուրքինային սարքավորման արտադրության համար նախատեսված էսքիզները եւ գծագրերը կատարվել են Մաքսային միության մաքսային տարածքում եւ տրամադրվել են արտադրողին անվճար, դրանց արժեքը (500 դրամական միավոր) հաշվի չի առնվում տուրքինային

սարքավորման մաքսային արժեքը որոշելիս՝ Համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան:

Տուրքինային սարքավորման մաքսային արժեքը որոշվում է նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերի, արտադրության ծախսերի, ընդհանուր ծախսերի (առելարային եւ կառավարման ծախսերի), շահույթի եւ ապրանքների առաքման ծախսերի գումարման միջոցով ($4\ 000 + 3\ 500 + 1\ 920 + 80 = 9\ 500$ դրամական միավոր):

Օրինակ 2. Անդամ պեյություններից մեկում գրանցված կազմակերպությունը (այսուհետ՝ գնորդ) օտարերկրյա կազմակերպությունից (այսուհետ՝ արտադրող) ձեռք է բերել եւ Մաքսային միության մաքսային տարածք է ներմուծում սարքավորում: Քանի որ սարքավորման մաքսային արժեքը չի կարող որոշվել Համաձայնագրի 4-րդ եւ 6-8-րդ հոդվածներին համապատասխան, այն որոշվում է 5-րդ մեթոդի միջոցով:

Ապրանքների առաքման ծախսերը կազմում են 5 դրամական միավոր:

Արտադրողի կողմից ներկայացված առելարային հաշիվների հիման վրա որոշվել են 31 դրամական միավոր ընդհանուր գումարի ծախսեր՝ ըստ մեկ միավոր ապրանքի հաշվարկի, այդ թվում՝

նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերը՝ 10 դրամական միավոր,

աշխատանքի վարձատրման եւ աշխատանքի վարձատրման հետ կապված սոցիալական կարիքների համար հատկացման ծախսերը՝ 8 դրամական միավոր,

համագործարանային ծախսերը՝ 12 դրամական միավոր,

փաթեթավորման ծախսերը՝ 1 դրամական միավոր:

Գնորդը արտադրողին անվճար տրամադրել է գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության համար անհրաժեշտ գծագրեր, որոնք կատարվել են Մաքսային միության մաքսային տարածքից դուրս: Նշված գծագրերի

ընդհանուր արժեքի՝ համապատասխան ձեռով իրականացված բաշխումից ելնելով՝ ստացվում է, որ մեկ միավոր ապրանքին բաժին է ընկնում 2 դրամական միավորին հավասար գծագրերի արժեքը:

Արտադրողը գնորդին տրամադրել է շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առելտրային եւ կառավարման ծախսերի)՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների միեւնույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքի ժամանակ սովորաբար հաշվի առնվող գումարի մասին տեղեկություններ: Այս փաստաթղթերին համապատասխան՝ սովորական շահույթը եւ ընդհանուր ծախսերը (առելտրային եւ կառավարման ծախսերը) միեւնույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքի ժամանակ կազմում են նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերի եւ արտադրության ծախսերի, ինչպես նաեւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության հետ կապված գործառնությունների ծախսերի մոտ 20 տոկոսը:

Նշված ցուցանիշը համաձայնեցվում է Մաքսային միության մաքսային տարածք արտահանման համար ապրանքների միեւնույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքների ժամանակ նույն արտադրության երկրի մյուս արտադրողների մոտ առկա ցուցանիշների հետ (օրինակ՝ սարքավորման արտադրության երկրի առելտրաարդյունաբերական պալատի կողմից տրամադրվել է համապատասխան եզրակացություն):

Հաշվի առնելով շարադրվածը՝ նշված մեծությունը սարքավորման մաքսային արժեքի հաշվարկման նպատակով համարվում է ընդունելի:

Շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առելտրային եւ կառավարման ծախսերի)՝ մեկ միավոր ապրանքի հաշվարկով արտադրողի կողմից կատարված ծախսերի մեծության նկատմամբ տոկոսային հարաբերությամբ հաշվարկված գումարը կկազմի 6.2 դրամական միավոր (31 դրամական միավոր x 20%):

Հետեւաբար, սարքավորման մաքսային արժեքը որոշվում է արտադրողի կողմից որոշված ծախսերի գումարման միջոցով, որին ավելացվում է անվճար

տրամադրված գծագրերի արժեքը ($31 + 2 = 33$ դրամական միավոր), շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առեւտրային եւ կառավարման ծախսերի)՝ արտադրողի կողմից կատարված փաստացի ծախսերի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ հաշվարկված գումարը եւ ապրանքների առաքման ծախսերը (5 դրամական միավոր):
